


ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝ ք. Կապան
Տարածաշրջանները՝ Կապան, Գորիս, Սիսիան և Մեղրի
Քաղաքները՝ Կապան, Գորիս, Սիսիան, Մեղրի,
Ագարակ, Քաջարան և Դաստակերտ

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից *պետական սահմանով* սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին:

Տարածքը	4506 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	102
Քաղաքներ	7
Գյուղեր	127
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	152.9 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	103.7 հազ. մարդ
գյուղական	49.2 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	67.8 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	4.7 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1-ի դրությամբ)	335100 հա
<i>այդ թվում՝ վարելահողեր</i>	43800 հա

Օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ, կապար) և ազնիվ (ոսկի, արծաթ) մետաղները, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի պելլիտի և դիատոմիտների պաշարներ):

Կապան քաղաքից հարավ՝ Ճավ գետի կիրճում գտնվում է աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռեզիկտային պուրակը, որը զբաղեցնում է 60 հա տարածություն (ծառերի

տարիքը հաշվվում է հարյուրամյակներով): Այդ եզակի պուրակի որոշ ծառերի տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 40-45 մ-ի:

Քաղաքից 4 կմ հեռու, Ողջի գետի աջ ափին է գտնվում թավուտ անտառներով գեղատեսիլ Շիկահողի պետական արգելոցը:

Ծովի մակերևույթից 3250 մ բարձրության վրա փռված Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապույտջուղ լեռան (3905 մ) հալոցքաջրերից՝ Կապույտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի կասկադի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին:

Միսիանից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

ՀՀ Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը **արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն** են:

2006թ.-ին **մարզի տնտեսության հիմնական ճյուղերի** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 18.8 %,
- գյուղատնտեսություն՝ 9.6 %,
- շինարարություն՝ 3.7 %,
- առևտուր և ծառայություններ՝ 1.8 %:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը **հանքարդյունաբերությունն** է և **էլեկտրաէներգիայի արտադրությունը**: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է **բուսաբուծության** (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և **անասնաբուծության** (մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների բուծում) մեջ:

Բեռնատրանսպորտայինը մարզում իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2005թ.-ից մեկնարկել է «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղու շինարարությունը, որը, որպես այլընտրանք՝ «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին և տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	396	408	436
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	127	129	139
կրպակներ	250	263	280
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2
առևտրի այլ օբյեկտներ	14	11	12

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	209	209	204
<i>որոնցից՝</i>			
մախադպրոցական պետական	55	52	50
հանրակրթական պետական դպրոցներ	121	123	124
հանրակրթական ոչ պետական դպրոցներ	-	1	-
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	19	19	18
պետական միջին մասնագիտական ուսումնական	8	8	8
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	-
պետական բարձրագույն ուսումնական	-	-	1
պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղեր	2	2	1
ոչ պետական բարձրագույն ուսումնական	3	3	2

Կապան քաղաքը (2006թ. տարեվերջ՝ 45.5 հազ. բնակիչ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ): Հանրապետության խոշոր արդյունաբերական քաղաքներից մեկն է:

Տնտեսության առաջատար ճյուղն **արդյունաբերությունն է**, ընդհանուր ծավալում գերակշռողը **հանքարդյունաբերությունն է**, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը:

Որոշակի տեսակարար կշիռ ունեն մաս **մշակող արդյունաբերությունը** (սննդամթերքների, ներառյալ ոչ ալկոհոլային խմիչքների, կարի, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակի, փայտե արտադրատեսակների և կահույքի, սարքավորանքի արտադրության) և **էլեկտրաէներգիայի արտադրությունը**:

Քաջարան քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 8.4 հազ.բնակիչ) հանրապետության **գունավոր մետալուրգիայի կենտրոնն** է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը **հանքարդյունաբերությունն** է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև **մշակող արդյունաբերությունը**, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 23.2 հազ.բնակիչ) տնտեսության հիմնական ճյուղը **արդյունաբերությունն** է: Հիմնականում զարգացած են **էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքների, ներառյալ ալկոհոլային խմիչքների, մանածագործական արտադրատեսակների, կարի և սարքավորանքի արտադրությունները**:

Միսիան քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 16.7 հազ.բնակիչ) տնտեսության ծավալում գերակշռողը **էլեկտրաէներգիայի արտադրությունն** է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև **սննդամթերքի և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները**:

Դաստակերտ քաղաքի բնակչությունը 2006թ. տարեվերջին կազմել է 0.3 հազ. մարդ:Ներկայումս աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 4.8 հազ.բնակիչ) տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը **մշակող արդյունաբերությունն** է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն **էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների արտադրությունը**:

Ազարակ քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 4.8 հազ.բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը **հանքարդյունաբերությունն** է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: **Քաղաքի տնտեսության** զարգացումը կապված է **պղնձամոլիբդենային արտադրության** հետ: Ազարակում է գտնվում Հայաստան-Իրան սահմանային կետը, մաքսատունը և սահմանամերձ առևտրի շուկան:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Կապան	ք. Կապան
Ազարակ	ք. Ազարակ
Գորիս	ք. Գորիս
Դաստակերտ	ք.Դաստակերտ
Մեղրի	ք. Մեղրի
Միսիան	ք. Միսիան
Քաջարան	ք. Քաջարան

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
1	Ագարակ	
2	Ալվանք (նախկինում՝ Աղարա)	
3	Ախլաթյան	
4	Ակներ (նախկինում՝ Բռուն)	
5	Աղիտու	
6	Աղվանի	
7	Աճանան (նախկինում՝ Խալաջ)	
8	Անգեղակոթ	
9	Անտառաշատ	
10	Աշոտավան	
11	Առաջածոր	
12	Արավուս	
13	Արծվանիկ	
14	Արևիս	
15	Բայաթ	
16	Բարձրավան	
17	Բնունիս	
18	Բռնակոթ	
19	Գեղանուշ	
		<ul style="list-style-type: none"> • Գեղանուշ • Գոմարան
20	Գեղի	
		<ul style="list-style-type: none"> • Գեղի • Գեղավանք • Կարդ • Կիցք (Զիրս) • Վերին Գեղավանք (Փիրլու) • Զարուտ (Զյուրուտ)
21	Գետաթաղ	
22	Գորայք	
23	Գուղենմիս	
24	Դավիթ Բեկ	
25	Դարբաս	
		<ul style="list-style-type: none"> • Դարբաս • Շամբ
26	Եղեգ	
27	Եղվարդ	
28	Թանահատ	
29	Թասիկ	
30	Իշխանասար (նախկինում՝ Ղզլջուղ)	
31	Լեկվազ	
32	Լեռնածոր	
		<ul style="list-style-type: none"> • Լեռնածոր • Կավճուտ • Մուսալլամ • Ներքին Գիրաթաղ • Վերին Գիրաթաղ
33	Լիճք	
34	Լժեն	
35	Լոր	
36	Խորանց	

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
37	Խնածախ	
38	Խնձորեսկ	
39	Խոզնավար	
40	Խոտ	
41	Ծավ	
		<ul style="list-style-type: none"> • Ծավ • Շիշկերտ
42	Ծղուկ	
43	Կաղնուտ	
44	Կարճևան	
45	Կոռնիձոր	
46	Կուրիս	
47	Հալիձոր	
48	Հարթաշեն	
49	Հարժիս	
50	Հացավան	
51	Ձորաստան	
52	Ճակատեն	
53	Մուցք	
54	Ներքին Խնձորեսկ	
55	Ներքին Խոտանան	
56	Ներքին Հանդ	
57	Նժդեհ (նախկինում՝ Սոֆյու)	
		<ul style="list-style-type: none"> • Նժդեհ (Սոֆյու) • Ցղունի
58	Նորաշենիկ	
59	Նորավան	
60	Նոր Աստղաբերդ (նախկինում՝ Փայահան)	
		<ul style="list-style-type: none"> • Նոր Աստղաբերդ (Փայահան) • Աջաբաջ • Գետիշեն (Հաջաթին) • Ոչեթի (Չայքենդ)
61	Նոնաձոր (նախկինում՝ Նյուվաղի)	
62	Շաղատ	
63	Շաքի	
64	Շենաթաղ	
65	Շիկահող	
66	Շինուհայր	
67	Շվանիձոր	
68	Շրվենանց	
69	Շուռնուխ	
		<ul style="list-style-type: none"> • Շուռնուխ • Աղբուլաղ • Վանանդ (Գուրդղուլաղ) • Ձորակ (Փայտամշակման գ.կ.)
70	Որոտան (Գորիսի տարածաշրջան)	
71	Որոտան (Միսիանի տարածաշրջան)	
72	Չափնի	
73	Սալվարդ	
74	Սառնակունք	
75	Սյունիք	
		<ul style="list-style-type: none"> • Սյունիք • Բարգուշատ (Արզնակ) • Դիցնայրի

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
		<ul style="list-style-type: none"> Խորձոր Սզնակ (Ներքին Գյուղաքլու)
76	Սպանդարյան	
77	Սվարանց	
78	Սրաշեն	
79	Սևաքար	
80	Վահրավար	
81	Վաղատին	
82	Վաղատուր	
83	Վանեք	
84	Վարդանիձոր	
		<ul style="list-style-type: none"> Վարդանիձոր Այգեձոր Թխկուտ (Մարալզամի)
85	Վարդավանք (նախկինում՝ Վերին Գյուղաքլու)	
86	Վերին Խոտանան	
87	Վերիշեն	
88	Տաթև	
89	Տանձավեր	
90	Տանձատափ	
91	Տաշտուն	
92	Տավրուս (նախկինում՝ Դովրուս)	
93	Տեղ	
94	Տոլորս	
95	Տորունիք	
96	Ուժանիս	
97	Ուլծ	
98	Քաշունի	
99	Քաջարան	
100	Քարահունջ	
101	Քարաշեն	
102	Օխտար	

